ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ГРАДОСТРОИТЕЛЬСТВА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
THE MINISTRY OF URBAN DEVELOPMENT
DEPUTY MINISTER

37510, ք.Երևան, Հանրապետության հր.
Կառավարության տուն 3
37510, г.Ереван,пл.Республики,
Дом Правительства 3
Government House 3, Republic Square,
Yerevan 375010
FAX (3742) 523200

25.08.10թ. N 03/13.1/3349-10

Ձեր N ---------- առ ----------

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
<<Շիրակ կենտրոն>> ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

ՀՀ կառավարության 2010 թվականի օգոստոսի 6-ի N 21/21.65/9300-10 գրությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարություն վերահասցեագրված՝ Ձեր 2010 թվականի օգոստոսի 6-ի դիմում-ուղերձի կապակցությամբ հայտնում եմ.

աղետի գոտու քաղաքային բնակավայրերում, այդ թվում Գյումրի քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում բնակարան ստացած քաղաքացիների ու նրանց ընտանիքների անդամների կողմից զբաղեցրած ժամանակավոր կացարանների (ոչ հիմնական շինությունների) ազատման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ կառավարության 1999 թվականի հունիսի 10-ի <<Աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման կարգը հաստատելու մասին>> N 432 որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի դրույթների համաձայն:

Դրա հետ մեկտեղ, ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N 1402-Ն որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթների համաձայն՝ բնակարան ստացող քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների կողմից բնակությունից ազատված ոչ հիմնական շինությունները ենթակա են քանդման:

Հաշվի առնելով, որ Գյումրի քաղաքում իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի հետ մեկտեղ լուծվում են նաև քաղաքի զարգացման տեսանկյունից կարևորվող տարածքները տնակային տնտեսություններից ազատման հետ կապված հարցերը, Ձեր գրությամբ ներկայացված՝ Գյումրի քաղաքում կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների սեփականաշնորհումն առանց ժամանակավոր կացարանների հանձնման վերաբերյալ առաջարկությունն ընդունելի չէ:

Հարգանքով

Ա.Հակոբյան

Ե.Աթայան
52-46-80